Հինգերորդ թողարկում

Կատարելով ներդրում կորպորատիվ պարտատոմսերում, Դուք կարող եք շրջանառության ընթացքում ցանկացած պահի դրանք վաճառելիս ետ ստանալ ոչ միայն ներդրված գումարն, այլ նաև կուտակված տոկոսագումարները:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի հինգերորդ թողարկման հիմնական պայմանները.

Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	25 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	40 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	1 000 000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 9%, որը կհաշվարկվի սկսած տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող օրվանից
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Տեղաբաշխման ժամկետ	05/10/12թ.-19/10/12թ.

Տեղեկացնում ենք, որ պարտատոմսերի թողարկման ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 29/09/2012թ.:

Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռք բերել 05/10/12թ. մինչև 19/10/12թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ԲԲԸ-ի Գլխավոր գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ 19/10/12թ.-ից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում՝ մասնավորապես “ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ” ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում:

Պարտատոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է անձնական հաշիվներ բացել “Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա” ԲԲԸ –ում և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ –ում կամ ՀՀ տարածքում գործող ցանկացած բանկում:

“Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին” ՀՀ օրենքի համաձայն, Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են “Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի” կողմից:

Պարտատոմսերի մարման ամսաթիվ՝ 20.10.2015թ.:

Ծանուցում.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի հինգերորդ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով.

- Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում - 20.01.2013թ.
- Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում -20.04.2013թ.
- Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում -20.07.2013թ.
- Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում -20.10.2013թ.
- Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում – 20.01.2014թ.
- Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում - 20.04.2014թ.
- Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում - 20.07.2014թ.
- Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում - 20.10.2014թ.
- Արժեկտրոնային եկամուտների իններորդ վճարում - 20.01.2015թ.
- Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում - 20.04.2015թ.
- Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում - 20.07.2015թ.
- Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում - 20.10.2015թ.

Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաև մարման գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ “Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա” ԲԲԸ-ում, պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ում կամ այլ բանկերում պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:

Պարտատոմսերի և Բանկի մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ Պարտատոմսերի թողարկման ազդագրում, որը 29.09.12թ-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից: